ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայիսի 9-ը մեր պատմության ամենախորհրդանշական էջերից է, որտեղ միահյուսված են հերոսական անցյալի հիշատակն ու խաղաղ ապրելու մարդկային պարզ ձգտումը:

Գլուխ եմ խոնարհում հանուն հայրենիքի և խաղաղության ընկած մեր բոլոր նահատակների հիշատակի առջև:

Խաղաղությունը պարզապես լռող զենքերը չեն... Այն ամենօրյա քրտնաջան աշխատանք է, զարգացող տնտեսություն, ստեղծարար միտք և անվտանգ միջավայր:

Այսօր մեր արժանապատիվ հաղթանակը շենացող, ամուր Սյունիքն է, որտեղ արարում է խաղաղության իրական գինն իմացող սյունեցին:

Շնորհավո՛ր Հաղթանակի և խաղաղության տոնը: